

խաճեռնու թեմամբ՝ վաստակաւոր զերասանուհի եւ բեմադրիչ Սիրարփի Աճէմեանի, գրական-գեղարուեստական ճեռարկ մը կազմակերպուեցաւ նուիրուած կեղերարխատ մտաւորական, բժիշկի, բանաստեղծ եւ գեղանկարիչ Ռուբէն Սեւակի, որ տեղի ունեցաւ 5 Մայիս 2019 Կիրակի, յետ միջօրէին, Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ներքնասրահին մէջ:



ներով ներկայացուց Ռուբէն Սեւակի կեանքը եւ գործերը: Մերթ ընդ մերթ Սիրարփի Աճէմեան իր զգայուն եւ զերասանական ոճով արտասանեց Ռուբէն Սեւակի «Վերջին օրօր», «Թրուպտուր» ներքը եւ «Վերջին Հայերը» բանաստեղծութիւնները: Տիկին Աճէմեան արժանացաւ ներկաներու բուռն ծափահարութիւններուն:

Հանդիսութեան աւարտին Հայր Եղիա Մ. Վրդ. Քիրէջեան բեմ բարձրանալով իր փակման խօսքը արտասանեց վեր առնելով Սիրարփի Աճէմեանի արժանիքները:

Հայր Սուրբը հետեւեալ կերպով արտայայտուեցաւ՝ «Արժանաւոր ու բազմափաստակ Տիկին Սիրարփի Աճէմեան իրեն կեանքի եւ ասպարէզի որպէս կողմնացոյց եւ բնարան ընտրած է «Պահէ աւանդը» կարգախօսը ու ահա երկարամեայ տարիներու ընդմէջէն

ան ո՛չ միայն պահած է ու պահպանած, այլ գուրգուրացած է եւ այդ խորանին ծառայելով ընծայած եւ զոհարեցած է իր էութեան լաւագոյնն ու հարստագոյնը: Այս պահուն յարգալիր ու խանդաղին կը խոնարհինք Սիրարփի Աճէմեանի տքնաջան եւ արգասաբեր բեղուն վաստակին առջեւ, որով ան գեղարուեստին, գիրին ու գաղափարին անսակարկ ու յարատե նուիրումովը իր գրական եւ անփոխարինելի ներդրումը կատարած է Հայ մշակոյթի անդաստանի նուիրման սպասարկութեան ծառայութեան մէջ:»

Հայր Եղիա, բարեմաղթութիւններ կատարելով շարունակեց իր խօսքերը. «Սիրարփի Աճէմեան իր երիտասարդ կորովով ու նաեւ իմաստուն եւ հարուստ անցեալի փորձառութեամբ բայց մանաւանդ իր իմաստութեամբ շարունակեց երկար տարիներ Հայ մշակոյթի աւանդը պահել, գուրգուրալ, շերմացնել եւ փոխանցել Հայութեան, յատկապէս արտասահմանի բոլոր խաւերուն:»

Հայր Եղիան շնորհակալութիւն յայտնեց ներկայ գրասէրներուն ու կազմակերպիչ յանձնախումբին:

Չեւամբ Հայր Եղիայի յուշապնակ մը յանձնուեցաւ օրուայ բանախօս Շահան Տէղիրմէնեանին, ինչպէս նաեւ Թորոնթոյի Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Հովիւին եւ Թորոնթոն Հայ Թատերասէրներու Խմբակի Ատենապետ Տօբթ. Պերճ Արթինեանի անունով Տիկին Աճէմեանին յանձնուեցաւ Յակոբ Ծանապղեանի կողմէ բժախնդրութեամբ պատրաստուած գնահատագիր մը: Ապա բոլոր արուեստագետները ստացան գեղեցիկ ծաղկեփունջեր: Այնուհետեւ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: Ներկաներ անգամ մը եւս առիթը ունեցան վայելելու վաստակաւոր զերասանուհի եւ բեմադրիչ Սիրարփի Աճէմեանը:



ՇԵՆԱԿԱՆԱՐԿՆԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿՈՒՄ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ



Գրականութեան հարցերի մասին խորհրդակցութիւններ կ'անցնենք յոկտեմբերի 25-ին, 18:00 Կ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: